

ԲԱՅՑ ԱՒԵԼԻ ՄԵԾ Է ՍԷՐԸ



Հեղինակ՝

ՄԻՇԷԼ ՎԱՆ ՓԱՐԱՅՍ

Թարգմանեց՝

ՍԱՇՏՈՑ ՎԱԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³Bi áó ì ³Ñ; Ô³¹/²ñ»³Ý

«ԲԼՅՅ ԼԻԵԼԻ ՄԵԾ Է ՍԵՐԸ»

Չորրորդ եւ հինգերորդ դարերում ապրած Անապատի Հայրերը, նրանց օրինակներն ու նրանց խօսքերը տակաւին կարող են վերաբերուել այսօրուայ տղամարդկանց եւ կանանց, քսանմէկերորդ դարի սկզբնաւորութեանը: Անտոնը, Արսէնը, Մակարը, Յովհաննէս Կարճահասակը, Սիզոնը, Պիմէնը, Սինքլէտիկան, Սառան, Թէոդորան եւ շատ ու շատ ուրիշներ, տակաւին խոր նշանակութիւն ունե՞ն մեր համար, թէ՞ պարզապէս դերակատարներն են քրիստոնէական մի գեղեցիկ վիպասանութեան, որոնք մեզ երբեմն ժպիտ են պարզեւում իրենց միամտութիւններով, երբեմն էլ սարսափեցնում են իրենց արտասովոր ճգնութիւններով: Այսօր տակաւին մեր Հայրե՞րն են՝ հաւատքի եւ սրտի դժուարին դարձի գործում, որպէսզի մենք նոյնպէս կարողանանք ընթանալ Աւետարանի արահետներով: Քրիստոնէական Աւանդութեան, բոլոր Եկեղեցիների աւանդութիւնների կողմից տրուած պատասխանը միշտ եղել է միաձայն «այո՛»:

Էութիմիոսը (377-473), Պաղեստինում, Արսէնին վերցնում է որպէս կեանքի օրինակ¹. Հաւանաբար այսպիսով է սկիզբ առնում պաղեստինցի վանականների կողմից իրականացուած տարածման (պրոպագանդայի) այն ապշեցուցիչ գործը, որի հետեւանքում՝ քրիստոնեայ Արեւելքի բոլոր լեզուներին են թարգմանուում Հայրերի ապոֆտէգմաների ժողովածոները. յունարէն, հայերէն, վրացերէն, ասորերէն, արաբերէն, եթովպերէն, սլաւոներէն. մի գործ՝ որ սուրբ երկրում աւարտուում է միայն իններորդ դարի վերջաւորութեանը, երբ իր մայրամուտն է ապրում Մար Սաբայի վանքը²:

Վեցերորդ դարում, Արեւմուտքում, Բենեդիկտոս Նորչացին իր Կանոնագրքում առաջին անգամ լինելով յիշում է Վարք Հարանցը, որը լատիներէնի էր թարգմանուել ապագայ Պապ Պեղագիոսի կողմից³, եւ դրանք առաջարկում է որպէս իրական վանական կեանքի յենման կէտ⁴: Բիւզանդական աշխարհում, Յովհաննէս Կղիմաքոսից յետոյ, տասնվեցերորդ դարի էզիքաստ շարժումից առաջ, յատկապէս Ստուդիոն վանքի աբբա Թէոդորոսը եւ էվէրգետոս վանքի աբբա Պողոսը դիմեցին Անապատի Հայրերի ապոֆտէգմաներին՝ պաշտպանելու համար իրենց առաջնորդութեամբ իրականացուած վանական բարենորոգումները: Եօթներորդ եւ ութերորդ դարերի ասորի մեծ միստիկների բազմութիւնը նոյնպէս (Իսահակ Նինուէացի, Յովսէփ Հացցայեայ, Դադիշո Քաթարացի եւ ուրիշ չափազանց քիչ ճանաչուածներ⁵) նուազագոյն չափով անգամ չհեռացաւ Եգիպտոսի անապատներից եկած ներշնչումից: Շատ ու շատ աւելի անյայտ է՝ թէ Գերմանիայի, Հոլանդիայի եւ Միացեալ Նահանգների բողոքական բարեպաշտութեան վերադարձօնքը քանիցս պարտական է Անապատի Հայրերի ապոֆտէգմաներին եւ Մակար Մեծին վերագրուած հոգեւոր ճառերին, որոնց ծանօթացել էր Յօհան Արնդի եւ Գոթֆրիէդ Արնոլդի միջոցով⁶: Մեթոդիզմի

¹ B. Flusin, *Miracle et histoire dans l'oeuvre de Cyrille de Scytopolis*, Paris 1983, pp. 54-60.

² L. Regnault, *Les apophtegmes des Pères en Palestine aux Ve-VIe siècles*, Irénikon 54 (1981), p. 320-330.

³ M. Van Parys, *L'accès à l'Orient monastique chez saint Benoît*, Irénikon 47 (1974), p. 48-58.

⁴ RB 73.

⁵ R. Beulay, *La lumière sans forme. Introduction à l'étude de la mystique syro-orientale*, Chevetogne 1986.

⁶ E. Benz, *La littérature du Désert chez les Evangéliques allemands et les Piétistes de Pennsylvanie*, Irénikon 51 (1978), pp. 338-357.

հիմնադիր Ջոն Վեզլիյը միեւնոյն ճառերը թարգմանում է անգլերէնի, որովհետեւ համոզուած էր՝ թէ դրանց մէջ պարունակուած է սրտի իրական քրիստոնէութիւնը¹: Արդի վանական հոգեկանութեան կողմից դէպի սեփական արմատներն ուղղուած վերադարձի շարժումը նոյնպէս ~ լինի Աթոս լեռան վանքերում, լինի Սկիտէի անապատում, լինի Արեւմտեան Եւրոպայում ~ չի խոսափում Անապատի Հայրերի հմայքից: Նրանց «խօսքեր»ը թարգմանուած են, ընթերցուած եւ ապրուած: Այսօր՝ ինչպէս երէկ, անապատի վանականներից ժառանգուած հոգեկանութիւնը յաղթահարում է Եկեղեցիները միմեանցից բաժանող պարիսպները եւ իր նպաստն է բերում սրբութեան քրիստոնէական համամիութենութեանը:

Ի՞նչն է անապատից բխած այս աղբիւրների նկատմամբ դարաւոր հմայքի պատճառը: Այն՝ որ անապատի հոգեւոր առաջնորդների օրինակը եւ ուսուցումները արտայայտում եւ ներկայ են դարձնում Քրիստոսի նմանողութեան եւ պանդուխտ Եկեղեցու խորհրդի էական տարրերից մէկը: Յովհաննէսից ստացած մկրտութիւնից յետոյ, Յիսուս, Սուրբ Հոգիով լի, առաջնորդում է անապատ եւ Եգիպտոսից ելքի քառասուն տարիների նմանութեամբ՝ քառասուն օր այնտեղ ապրում է Հօր հանդէպ կատարեալ հնազանդութիւնը (հմտ. Ղկս 4, 1-2):

Եկեղեցին փախչում է անապատ (հմտ. Յյտ 12), ազատուելու համար չարի ուժերից: Քրիստոնէական եւ վանական անապատը, իրօք, այն վայրը չէ՝ ուր թուլամորթները կարող են պաշտպանուել աշխարհից եւ մարդկանցից. ընդհակառակն, այն ամառի վայրն է՝ ուր գատկական մարդը հանդիպում է Աստծուն եւ հակառակորդին: Այն վայրն է՝ ուր հին մարդու, մեր եսի վիճերը մերկացւում են, եւ ուր Աստծոյ առաջ խոնարհութեամբ ճանաչուած մեղքի յուսահատութիւնն ու հոգեվարքը Սուրբ Հոգու կերպարանափոխիչ գորութեամբ վերջապէս վերածւում են բերկրանքի եւ ողորմած սիրոյ անդունդների: Այս իմաստով, Անապատի Հայրերի խօսքերը մի ուսմունք են՝ որ վերաբերում է հետեւելիք գործնական ճանապարհին², աւելի՛ քան հայեցողութեան տեսական (թէորիկ) երեւոյթներին: Մեր այս հոգեւոր առաջնորդների ուսմունքը յաճախ առեղծուածային է, շփոթեցուցիչ, երբեմն ուղղակի հակասական, միշտ անձնական: Որովհետեւ կարեւորն այն է՝ որ իւրաքանչիւր քրիստոնեայ կրի իր խաչը եւ հասնի Յիսուս Քրիստոսի յարութեան մասնակցութեանը: Կարեւորն այն է՝ որ իւրաքանչիւր ոք բացայայտի եւ ճանաչի իր մեղքը, որպէսզի ընդունի փրկութիւնը: Փրկութեան այս ճանապարհը անցնում է խոնարհութեան, կշռադատութեան եւ մերձաւորի սիրոյ միջով: «Հայր Անտոնն ասաց. ”Տեսայ՝ թէ ինչպէս էին սատանայի ցանցերը տարածուել ամբողջ երկրի վրայ, եւ հառաչելով ասացի. Արդեօք ո՞վ կարող է փրկուել: Լսեցի մի ձայն՝ որն ասաց ինձ. Խոնարհութիւնը”»: «Հայր Անտոնն ասաց. ”Կան ոմանք, որ ճգնութիւններով նահատակում են իրենց մարմինը, բայց կշռադատութեան մէջ թերանալով՝ հեռանում են Աստուծոց”»: «Դարձեալ ասաց. ”Մերձաւորից է՝ որ մեզ գալիս են կեանքն ու մահը: Որովհետեւ եթէ շահում ենք մեր եղբօրը՝ Աստծուն ենք շահում, իսկ եթէ գայթակղեցնում ենք եղբօրը՝ Քրիստոսի դէմ է՝ որ մեղանչում ենք”»³:

Քրիստոնէական եւ վանական կեանքի նպատակը. Մերը

Մէրը եւ աղօթքը բոլոր քրիստոնեաների կոչումն են, եւ Անապատի Հայրերի ուսուցումները յաճախ են հաստատում այս ճշմարտութիւնը, երբեմն մի քիչ երգիծանք խառնելով պատմութիւններին: «Հայր Անտոնը անապատում ունեցաւ

¹ G.S. Wakefield, *La littérature du Désert chez John Wesley*, Irénikon 51 (1978), pp. 155-170.

² Գրծ 9, 2.

³ Անտոն 7, 8, 9.

այս յայտնութիւնը. «Քաղաքում կայ մէկը՝ որ նմանւում է քեզ. մասնագիտութեամբ բժիշկ է, աւելորդ ունեցուածքները տալիս է կարիքաւորներին եւ ամբողջ օրը հրեշտակների հետ միասին երգում է երեքսրբեան օրհնութիւնը»¹:

Սիրել Աստծուն ամէն ինչից աւելի, եւ մերձաւորին՝ ինչպէս Քրիստոս ինքն է սիրում նրան: Ապոֆտէգմաները յատուկ կերպով ուշադիր են այս սիրոյ «ինչպէս»ին:

Մովսէս Եթովպացին, մեծ սուրբ դառնալուց առաջ մեծ աւագակ էր:

«Մի օր, Սկիտէի եղբայրներից մէկը մեղքի մէջ ընկաւ: Վանականները հաւաքուելով, ոմանց ուղարկեցին հայր Մովսէսին կանչելու: Բայց քանի որ չէր կամենում գալ, քահանան ուղարկեց նրան ասելու. «Ե՛կ, բազմութիւնը քեզ է սպասում»: Յայնժամ եկաւ, ուսերի վրայ աւագով լի կողով դրած, որի ծակերից աւագը հոսում էր վար: Եղբայրներն ընդառաջ ելան նրան եւ հարցրին. «Հայր, ի՞նչ է նշանակում սա»: Ծերը պատասխանեց նրանց. «Իմ մեղքերն են, որ հոսում են ետեւիցս, մինչ ես չեմ տեսնում դրանք: Սակայն այսօր եկել եմ այստեղ՝ դատելու ուրիշների մեղքերը»: Այս խօսքերը լսելով, ոչինչ չասացին մեղանչած եղբօրը եւ ներեցին նրան»²:

Այս ապոֆտէգման ցոյց է տալիս սիրոյ կողմերից մէկը. մեզնից ոչ ոք չի կարող յաւակնել Աստծոյ դատաստանը կանխելու իրաւունքը, առանց ինքն իրեն դատապարտելու՝ ողորմութեան պակասի պատճառով: Մակար Եգիպտացուն պատահած հետեւեալ դէպքը ցոյց է տալիս սիրոյ կողմերից մէկ ուրիշը, որը նոյնքան կարեւոր է ու հիմնական. բարութիւնը՝ որ յուզում է սրտերը:

«Պատմում էին՝ թէ մի օր հայր Մակար Եգիպտացին իր աշակերտներից մէկի ուղեկցութեամբ Սկիտէից բարձրանում էր Նիտրիայի լեռը եւ երբ գրեթէ հասնելու վրայ էին՝ ասաց աշակերտին. «Մի քիչ առաջ անցիր»: Մինչ քայլում էր նրանից մի քիչ առաջ, աշակերտը հանդիպեց մի հեթանոս քահանայի եւ նրա ետեւից աղաղակեց. «Ե՛յ, սատանա, ո՞ւր ես վազում»: Քուրմը, ետ դառնալով, մի քանի գեղեցիկ հարուածներ իջեցրեց նրա թիկունքին, այնպէս՝ որ կիսամեռ թողեց նրան: Ապա, գաւազանը վերցնելով, շարունակեց իր ճանապարհը: Քիչ անց, մինչ աճապարելով քայլում էր, հանդիպեց հայր Մակարին: Վերջինս նրան ասաց. «Ողջո՛յն, ողջո՛յն քեզ՝ որ յոգնած ես»: Զարմացած՝ քուրմը մօտեցաւ նրան եւ հարցրեց. «Ի՞նչ բարի բան տեսար ինձնում, որ խօսքերովդ դիմեցիր ինձ»: Ծերն ասաց. «Որովհետեւ տեսայ՝ որ յոգնում ես, բայց չգիտես՝ որ յոգնութիւնդ ապարդիւն է»: Յայնժամ քուրմն ասաց. «Ողջոյնդ լսելով՝ զղումով լցուեց անձս եւ հասկացայ՝ որ պատկանում ես Աստծուն: Մինչդեռ մի ուրիշ չար վանական, որին հանդիպեցի, նախատեց ինձ եւ ես նրան կիսամեռ թողեցի»: Ծերը հասկացաւ՝ որ խօսքը վերաբերում էր իր աշակերտին: Իսկ քուրմը, նրա ոտքերն ընկնելով, ասաց. «Եթէ ինձ վանական չդարձնես, չեմ թողնի քեզ»: Ապա միասին հասան այնտեղ՝ ուր ուշակորոյս ընկած էր եղբայրը, նրան իրենց ուսերի վրայ առան եւ տարան նրան լեռան եկեղեցին: Իսկ քուրմը վանական դարձաւ եւ իր շնորհիւ շատ հեթանոսներ դարձան քրիստոնէայ: Հայր Մակարը յաճախ էր ասում. «Չար խօսքը չարացնում է նաեւ բարիներին, իսկ բարի խօսքը բարիացնում է նաեւ չարերին»³:

Անապատի Հայրերի այս գործուն սիրոյ օրինակները կարող ենք անսահմանափակ քանակով բազմապատկել: Երբեմն, այս սէրը դառնում էր նրբանկատ: «Ծերերից ոմանք գնացին հայր Պիմէնի մօտ եւ հարցրեցին նրան. «Եթէ եղբայրներից ոմանք ննջում են աղօթքների ժամանակ, ուզո՞ւմ ես՝ որ ցնցենք նրանց, որպէսզի արթուն մնան հսկումների ընթացքում»: Բայց նա պատասխանեց.

¹ Անտոն 24; Պիմէն 109.

² Մովսէս 2.

³ Մակար 39.

”Իրականում, եթէ ես տեսնում եմ՝ թէ եղբայրներից մէկը ննջում է, գլուխը ծնկներին եմ դնում եւ թողնում եմ՝ որ հանգստանայ”¹:

Հոգեբանական ինչպիսի՛ նրբութիւն եւ հոգեւոր ինչպիսի՛ կորովամտութիւն այս սակաւաթիւ խօսքերում: Եղբայրներից ոմանց գլուխները ծանրանում են Գիշերային ժամերգութեան ժամանակ եւ նա, Պիմէնը, վանահայրը, չի միջամտում: Յատուկ ջանքերի կարիք չկայ՝ երեւակայելու համար առաւել ուժեղ ու առաքինի վանականների դժգոհութիւնը Պիմէնի եւ յոգնած խեղճ եղբայրների հանդէպ: Նրանք մեծագոյն գոհունակութիւն կը ստանային, եթէ իրենց թոյլատրուէր բռնցքահարումով իրենց պարտականութեան կատարմանը հրաւիրել ննջող եղբայրներին: Կարող ենք գուշակել Աբբա Պիմէնի անուղղակի պատասխանը, լուսաւորուած՝ մի գեղեցիկ ծաղրական ժպիտով. իրական խնդիրը ժամերգութիւնների ընթացքում ննջող եղբայրները չեն, այլ դուք, եղբայրներ, որ ժամերգութիւններն անցկացնում էք զայրանալով եւ ուրիշներին քննադատելով:

Այսպիսով, մարդկային սրտի ծուռումուռ դարձուածքները մերկացում են, որպէսզի վանականը կարողանայ հաճոյ լինել Աստծուն (Հմմտ. Մտթ 3, 17; Հռմ 12, 11): Եթէ Աստուած առաջինը սիրեց մեզ, ճրիօրէն, առանց մեր արժանիքների, մենք պարտաւոր ենք պատասխանել այդ սիրոյն, մտնել Դաշինքի մէջ, Գառան հարսանիքի սրահից ներս, Հարսի՝ Եկեղեցու հետ միասին: Հետեւաբար, Հօր որդիներն ու դուստրերը դառնալ՝ նախեւառաջ նշանակում է պահել պատուիրանները:

«Մէկը հարցրեց հայր Անտոնին. ”Ի՞նչ պէտք է անեմ՝ Աստծուն հաճոյ լինելու համար”: Ծերը պատասխանեց. ”Արա՛ այն՝ ինչ պատուիրում եմ քեզ. ուր որ էլ գնաս՝ միշտ Աստծուն ունեցիր աչքերիդ առաջ. ինչ որ էլ անես կամ ասես՝ ունեցիր Սուրբ Գրութիւնների վկայութիւնը. ուր որ էլ բնակուես՝ շուտով մի՛ հեռացիր այնտեղից: Պահիր այս երեք պատուիրանները եւ կը փրկուես”²:

Ապա նշանակում է նաեւ ստանալ սիրոյ այն վէրքը՝ որն անբուժելի է: «Խոցուեցին աստուածային գեղեցկութեանն ի տես եւ երկնային ու անմահ կեանքը թափանցեց նրանց հոգիներից ներս: Այս իսկ պատճառով, նրանք տենչում են երկնքի Արքայի այս սիրոյն եւ վիթխարի բաղձանքով՝ Նրանից բացի ուրիշ ոչինչ չունեն իրենց աչքերի առաջ»³:

Մակարի վերջին խօսքը նոյնպէս, որ ներշնչուած է խաչի վրայ Յիսուսի արտասանած խօսքից (Հմմտ. Ղկս 23, 46) եւ Ստեփանոսի խօսքից (Հմմտ. Գործք 7, 59), լինելու է սիրոյ մի աղաղակ. «Տէր իմ Յիսուս, Դու ես հոգուս սէրը. ընդունիր հոգիս»⁴:

Ճանապարհը

Վանական կեանքի միակ նպատակը սէրն է: Ով սկսում է քայլել փրկութեան այս ճանապարհով, շուտով բացայայտում է իր տկարութիւնն ու անկարողութիւնը: Մենք ազատ չենք: Մեղաւոր մարդը իր եսասիրութեան բանտարկեալն է ~ եսասիրութիւն՝ որն Անապատի Հայրերը անուանում են սեփական կամք ~ բանտարկեալն է իր սեփական մտային աշխարհի՝ որը Հայրերն անուանում են «մտածումներ», հիմնուելով Մարկոս 7, 21 հատուածի վրայ:

¹ Պիմէն 92.

² Անտոն 3.

³ *Les homélies spirituelles de saint Macaire* (Homélie 5, 6), Bellefontaine 1984, p. 124.

⁴ *Les homélies spirituelles de saint Macaire* (Vie copte), Bellefontaine 1984, p. 82.

«Հարցրեցին հայր Ամոնին. ”Ո՞րն է նեղութիւններով լի նեղ ճանապարհը”:
Պատասխանեց. ”Ահա սա է. Աստծոյ սիրոյ համար բռնութիւն գործադրել սեփական
մտածումների վրայ եւ արմատախիլ անել սեփական կամեցողութիւնները: Սա է
նաեւ այս խօսքերի նշանակութիւնը. Ահա, մենք ամէն բան թողեցինք եւ եկանք քո
ետեւից”»¹:

Յիսուսի աշակերտ դառնալ՝ նշանակում է կրել խաչը, կորցնել սեփական ետը՝
հրաժարուելով մեղքից եւ մակերեսային ազատութիւնից: Անապատը սակաւատեւ
ժամանակում յայտնում է, որ հոգեբանական կամ ա՛յլ տեսակի դժուարութիւններից
այն կողմ՝ մարդը կարիքն ունի մի փրկութեան եւ մի փրկչի: Ինչպէ՞ս կարող եմ
ստանալ փրկութիւնը: Ահա՛ Սուրբ Հայրերի առջեւ աշակերտների կողմից բազում
անգամներ դրուած հարցը: Նրանց՝ որոնք գալիս են գոհացնելու իրենց
հետաքրքրասիրութիւնը, վիճաբանելու վերացական տեսութիւնների շուրջ, քննելու
աստուածաբանութեանը վերաբերուող քիչ թէ շատ դատարկ խնդիրներ, ծերերը
չէին պատասխանում անգամ: Սա փաստում է հետեւեալ ապոֆտէզման:

«Քաղաքի դատաւորը մի օր եկաւ հայր Սիմոնին այցելելու: Քաղաքի
քահանաները նրանից առաջ հասնելով, ասացին. ”Հայր, պատրաստուիր,
որովհետեւ դատաւորը քո մասին լսելով՝ գալիս է օրհնութիւնդ ստանալու”:
”Շատ
լաւ”, պատասխանեց, ”կը պատրաստուեմ”:
Ապա հագաւ իր հին պատմուճանը, մի
կտոր հաց ու պանիր առաւ եւ մուտքին նստելով՝ սկսեց ուտել: Երբ դատաւորն իր
չքախմբի հետ տեղ հասաւ եւ նրան տեսաւ, արհամարհեց նրան. ”Սա՞ է ճգնաւորը,
որի մասին լսել էինք”:
Եւ իսկոյն բոլորը ետ վերադարձան»²:

Ամբողջովին ուրիշ վերաբերմունք է ցուցաբերում ճշմարիտ աշակերտը, նա՝ որ
ականջներ ունի լսելու համար: Էռպրեպիոսը, որի մասին խօսուում է հետեւեալ
ապոֆտէզմայում, հաւանաբար Եւագրիոս Պոնտացին է, անապատի իմաստասէրը³,
որին քրիստոնէական հոգեկանութիւնը շատ բան է պարտական: «Իր վանական
կեանքի սկզբում, հայր Էռպրեպիոսը գնաց ծերերից մէկի մօտ եւ հարցրեց. ”Հայր,
մի խօսք ասա ինձ. ինչպէ՞ս կարող եմ փրկուել”:
Պատասխանեց. ”Եթէ ուզում ես
փրկուել, երբ այցելութեան ես գնում որեւէ մէկին, մի՛ խօսիր՝ մինչեւ որ իրենք
չհարցնեն քեզնից”:
Այս խօսքերը լսելով, սիրտը զղջումով լցուեց, գետին
տարածուեց՝ ասելով. ”Յիրաւի, բազում գրքեր եմ կարդացել, բայց երբեք չեմ գտել
այս ուսուցումը”»⁴:

Երիտասարդ աշակերտի հարցը կեանքի ու մահուան խնդիր է: Մէջտեղով
անցնում է փրկութիւնը, իր սրտի եւ իր հոգու ամբողջականութիւնը, Աստծոյ որդի
լինելու իր արժանապատուութիւնը: Ծերունու պատասխանը զարմացուցիչ է:
Արտաքուստ չի վերաբերում քրիստոնէական դարձի հիմնական սկզբունքներից
մէկին, այլ աւելի՛ լաւ դաստիարակութեան կանոններից մէկին, որն արդէն
յանձնարարուած էր Աստուածաշնչի իմաստասիրական գրքերի կողմից: Աշակերտը
պարտաւոր է փականք դնել իր լեզուին: Պարտաւոր է պահպանել լռութիւնը,
մինչեւ որ խօսելու չհրահրուի: Երիտասարդ վանականի հակազդեցութիւնը ցոյց է
տալիս, որ ծերը կարդացել է նրա սրտի խորքը եւ իր փոքրիկ յանձնարարութիւնով՝
մատը դրել է արիւնոտ ծածուկ վէրքի վրայ: Էռպրեպիոսը կրթութիւն ունեցող
մէկն է (paideia), որ երկար ժամանակ ուսումնասիրել է հին քաղաքակրթութեան
դասական հեղինակների գործերը, իր ասպարէզում հմուտ մէկն է, ընդունակ է
ամէն ինչի մասին խօսելու, պատրաստ պատասխանների շտեմարան է: Բայց ճիշտ
այստեղ է իր հիւանդութիւնը. ընդունակ է ամէն ինչի վերաբերեալ պատասխաններ

¹ Ամոն 11.

² Սիմոն 2.

³ A. Guillaumont, *Un philosophe au désert: Evagre le Pontique: Aux origines du monachisme chrétien*, Bellefontaine 1979.

⁴ Էռպրեպիոս 7.

տալու՝ որովհետեւ չի լսում դիմացիներին հարցերը: Լի է ինքն իրենով, իր կրթութեամբ, եւ յատկապէս այն յաւակնոտ ինքնագերագնահատումով՝ որ բխում է իր գրքային եւ հռետորական գիտութիւնից: Բայց չի լսում եղբայրներին: Ինչպէ՞ս, ուրեմն, կարող է լսել Աստուծոն եւ Նրա Խօսքը, եթէ ընդունակ չէ լսելու իր եղբորը, եթէ միշտ ունի պատրաստ պատասխանը: Ծերունու խորհուրդը, հետեւաբար, շատ պարզ է, բայց խոցում է աշակերտի կեանքի սիրտը. եթէ կամենում ես փրկուել, դարձիր Աստուծոն ունկնդրող աղքատ, սովորելով ունկնդրել եղբայրներին: Ահա թէ ինչու է ուպրեպիոսը իսկոյն զղջման զգացումներով լցուեց. աչքերը բացուեցին՝ տեսնելու ինքն իրեն: Նա՛ որ մինչեւ այդ պահը բարձր կարծիք ունէր սեփական իմաստութեան եւ սեփական հոգեկանութեան վերաբերեալ, այժմ բացայայտում է՝ որ եսասիրութեան մի փոքրիկ հրէշ է: Բայց նաեւ բացայայտում է՝ որ այդուհետեւ իր առջեւ բացուել է փրկութեան արահետը. ինչ որ մէկը մի կողմ է թաւալեցրել աղբիւրի ակունքը փակող քարը. այժմ նա կարող է դառնալ փոքր, խոնարհ:

Այսպիսով, հասնում ենք ճանապարհի էական բաղադրամասերին. ճգնութիւնը, խոնարհութիւնը, սրտի մաքրութիւնը, աղօթքը, ողորմութիւնը:

Ճգնութիւնը

Ակնյայտ ստութիւն կը լինէր ասելը՝ թէ Անապատի Հայրերի ճգնութիւնները մեզ ձգում են ու հմայում: Ծգնել՝ նշանակում է հրահանգուել, մարդուել: Քրիստոնեայի համար, ճգնութիւնը նպատակին հասնելու միջոց է պարզապէս, ո՛չ թէ բուն նպատակ: Առաջին տեղը գրաւում են Աստուծոյ սէրն ու ներողամտութիւնը: «Մեղքերդ ներուեցին քեզ. գնա՛ եւ այլեւս մի՛ մեղանչիր» (Յվհ 8, 11): Ներման գերառատ բերկրանքը իրենում պարունակում է մարդու կողմից ճանաչումն ու ընդունումը: Այսուհետեւ, խօսքը վերաբերում է պայքարելուն՝ մեր անձը արժանի ցոյց տալու համար Աստուծոյ կողմից ստացած այդ սիրոյն: Ծգնութիւնը այս պայքարն է: Այն՝ ինչ որ ես, դառնում ես զուտ շնորհի միջոցով: Անապատի վանականները մեծ ճգնաւորներ էին. ծոմապահութիւնը, աղօթքը եւ հսկումները բերկրանքի պտուղներն են: Բայց ճգնութիւնը պէտք է ենթարկուի խստագոյն կշռադատութեան, որպէսզի խուսափի գործերի նորայայտ արդարութիւն դառնալուց:

«Ծերերից մէկն ասաց. ”Ով որովայնը լցնում է կերակուրներով ու ըմպելիներով, անհոգութեան է մատնում աղօթքը եւ այլեւս չի կարողանում պատերազմ մղել սեփական մտածումների դէմ: Քաղցը եւ հսկումները սիրտը մաքրում են չար մտքերից, իսկ մարմինը՝ թշնամու յարձակումներից, այն դարձնելու համար Սուրբ Հոգու բնակավայրը”»:

Խոնարհութիւնը

Մենք մեծագոյն դժուարութեամբ ենք ըմբռնում խոնարհութիւնը, ինչպէս որ միեւնոյն դժուարութիւնը զգում էին Անապատի Հայրերը: Խոնարհութիւնը տկարութիւն չէ, ո՛չ էլ սեփական անձի ցածրութեան հոգեբանական բարդոյթ:

«Ծերերից մէկն ասաց. ”Խոնարհ է ո՛չ թէ նա՛ ով արհամարհում է ինքն իրեն, այլ նա՛ ով ուրախութեամբ է ընդունում մերձաւորներից ստացած վիրաւորանքներն ու վշտերը”»:

Խոնարհութիւնը սէրն է՝ որն ինքն իրեն փոքրացնում է Աստուծոյ եւ մարդու ազատութեան առաջ: Այսպիսին եղաւ Աստուած մեր նկատմամբ, յանձինս Յիսուս Քրիստոսի. «Ես հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մտթ 11, 29): Անապատի մեծագոյն Հայրերը խոնարհութեան մէջ էին տեսնում առ Աստուած առաջնորդող ճանապարհը, միակը՝ որ ենթակայ չէ սատանայի խաբէութիւններին:

«Ծերերից մէկն ասաց. ”Յաճախ է պատահել՝ որ խոնարհութիւնը բազում անձանց փրկել է նաեւ առանց ճգնութիւնների: Սա փաստում են մաքսաւորն ու անառակ որդին, որոնք մի քանի բառ միայն արտասանեցին եւ փրկուեցին”»:

Հետեւելով Հայրերի աւանդութեանը, բոլոր դարերի վանականները Լեռան Քարոզի առաջին երանութիւնը - «Երանի՛ հոգով աղքատներին» (Մտթ 5, 3) - համարել ու համարում են խոնարհների երանութիւնը: Ինչպէ՞ս է մէկն, ուրեմն, Աստծոյ շնորհով դառնում խոնարհ: Ոչ ոքի չքննադատելով եւ ճանաչելով այն բարիքը՝ որ Աստուած գործում է իւրաքանչիւրի անձում:

«Ծերերից մէկն ասաց. ”Սիրտդ կամաց կամաց վարժեցրու իւրաքանչիւր եղբօր մասին ասելու. ’Իսկապէս ինձնից գերազանց է Աստծոյ առաջ’: Դարձեալ. ’Իսկապէս ինձնից աւելի եռանդուն է’: Այսպիսով, վերջիվերջոյ կը հասնես քեզ բոլորից ցածր նկատելու եւ Աստծոյ Հոգին կը բնակուի քեզնում: Մինչդեռ եթէ արհամարհես թեկուզեւ մէկ մարդու, Աստծոյ շնորհը կը հեռանայ քեզնից եւ կը թողնի քեզ մարմնի ցանկութիւնների ձեռքում, սիրտդ կը կարծրանայ եւ այլեւս չի գտնուի քեզնում զղջումը”»:

Ոչ ոք չի կարողացել Մարկոս ձգնաւորից աւելի լաւ արտայայտել խոնարհութեան ազատարար էութիւնը. «Խոնարհութիւնը խղճի կողմից ստացած դատապարտութիւնը չէ, այլ Աստծոյ շնորհի եւ Նրա կարեկցանքի ճանաչումն ու ընդունումը»¹: Աստծոյ առջեւ պարտքերս վճարելուն անկարող հոգի լինելու իմ ճշմարտութեան ճանաչմամբ է միայն, որ կարող եմ ստանձնել մեղանշական արարքներիս պատասխանատուութիւնը եւ թողնել՝ որ ինձ նոյնպէս փրկի յարուստիւն առած Փրկիչը: Միայն այս դէպքում է ծնւում բոլոր մարդկանց հետ համերաշխութիւնն ու հաղորդակցութիւնը նրա՝ ով բոլորից անջատուած է եւ բոլորին միացած²: Խոնարհութեան այս հոգեվիճակի համար առաւել յուզիչ ի՞նչ վկայութիւն կարելի էր գտնել, քան այն որմնագրութիւնը՝ որը մի քանի տարի առաջ յայտնաբերուեց Էգաուի խուցերից մէկում. «Ես եմ, փոքրիկ Յովհաննէսը. թող որ համայն աշխարհը ների ինձ»³:

Մրտի մաքրութիւնը

«Երանի՛ սրտով մաքուրներին, որովհետեւ տեսնելու են Աստծուն» (Մտթ 5, 8): Մաքուրի եւ անմաքուրի վերաբերեալ Յիսուսի ուսուցումները (հմտ. Մտթ 15, 1-20) մեծապէս տպաւորել էին անապատի վանականներին: Մարդուն պղծում է այն՝ ինչ որ դուրս է գալիս սրտից: Եթէ մարդը կամենում է փրկուել, պէտք է թոյլատրի՝ որ փրկութեան շնորհը ներթափանցի մինչեւ իր էութեան արմատները: Յոգնաջան աշխատանք է, բայց անհրաժեշտ:

«Մի անգամ հարցրեցին Ագաթոնին. ”Ո՞րն է աւելի կարեւոր. մարմնի յոգնութիւնները՝ թէ՞ սրտի պահպանութիւնը”»: Ծերը պատասխանեց. ”Մարդը նման է ծառի. մարմնի յոգնութիւնները տերեւներն են, սրտի պահպանութիւնը՝ պտուղը: Արդ, ինչպէս որ գրուած է. ’Ամէն մի ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրուելու է եւ կրակի մէջ նետուելու’, պարզ է՝ որ մեր ամբողջ ջանքը պէտք է նպատակաւորուած լինի դէպի պտուղը, այսինքն՝ մեր հոգու պահպանութիւնը: Բայց անհրաժեշտ են նաեւ տերեւների պաշտպանութիւնը եւ զարդարանքը, այսինքն՝ մարմնի յոգնութիւնները”»⁴:

¹ La Filocalia, vol. I, Torino 1982, p. 198.

² Եւագրիոս, Trattato sulla preghiera 124; 125.

³ S. Sauneron, Les ermitages chrétiens du désert d'Esau, n. 75; t. IV, p. 78, n. 2.

⁴ Ագաթոն 8.

Մեղքով եւ նրա բազում ձեւերով համոզելու ու շղթայելու իշխանութեամբ՝ անկեալ մարդը ցրուել է անթիւ անհամար մտահոգութիւնների, յաւակնութիւնների ու ցանկութիւնների բազմութեան մէջ: Աստծոյ պատկերը նրանում աղաւաղուել է: Նրա յիշողութիւնը հեռացել է Աստծոյ մասին շարունակական մտածումից եւ լցուել է բազմատեսակ իրողութիւններով: Մարդը ստրկացել է այս բազմակիութեանը. այլեւս «monos» չէ, միանձն, այլ աւելի՝ բաժանուած, բազմանձն: Չհաշտուել քրիստոնէական մեր կեղծաւորութեան նուազագոյն ծամածռութիւնների ու երկդիմութիւնների հետ. ահա՛ թէ ինչու է կայանում ներքին հոգեւոր ճգնութիւնը: Այս պայքարի նպատակը յայտնի է. կրկին պաշտել կարողանալ Հօրը հոգիով եւ ճշմարտութեամբ: Կարող է զարմանք պատճառել «կրքերի հոգեբանութեան» նկատմամբ վանականների ունեցած հետաքրքրութիւնը: Անապատի վանականները իրենց սեփական սրտի հմուտ ճանաչողներն էին, որովհետեւ «Տէ՛ր, Տէ՛ր» ասողները չէ՛ որ մտնելու են երկնքի Արքայութիւն, այլ նրանք՝ ովքեր կատարում են երկնաւոր Հօր կամբը:

Աղօթքը

Հարկաւոր է ընդարձակ տարածք յատկացնել՝ վանականների աղօթքի մասին մանրամասնօրէն խօսել կարողանալու համար: Արդէն Օգոստինոսը զմայլուում էր արտակարգ պարզեւներին ի տես, որոնք նրանք ստացել էին Սուրբ Հոգուց¹: Յովհաննէս Քասսիանոսը իր Հարցազրոյցներից երկուսը (իններորդը եւ տասներորդը) ընծայել է այս նիւթի շուրջ նրանց կողմից տրուած ուսուցումներին: Կարճառօտ սլաքական աղօթքները (monologhistos աղօթքը) դառնալու էին միատիկ կեանքի քրիստոնէական բոլոր աւանդութիւնների ընդհանուր բարիքը²: Այստեղ բաւարարուենք միայն մէկ օրինակով:

«Հայր Եղիան պատմեց՝ թէ ծերերից մէկը բնակւում էր հեթանոսական մի լքուած տաճարում: Մի օր սատանաները դալիս են եւ նրան ասում. "Հեռացիր մեր տնից": Ծերը պատասխանում է. "Դուք տուն չունէք": Կատաղած, սատանաները սկսում են ցիրուցան անել արմաւենու ճիւղերը, որոնցով աշխատում էր ծերը: Բայց նա համբերութեամբ կրկին հաւաքում էր դրանք: Վերջում, ծերունու ձեռքից բռնելով, սատանան քաշում է նրան դուրս: Դռան մօտ հասնելով, ծերունին միւս ձեռքով կառչում է դռնից եւ աղաղակում. "Յիսո՛ւս, օգնիր ինձ": Իսկոյն, սատանաները փախչում են: Ծերունին նստում ու սկսում է լալ: Տէրը նրան հարցնում է. "Ինչո՞ւ ես լալիս": Ծերը պատասխանում է. "Որովհետեւ համարձակւում եմ տիրանալ մարդկանց վրայ եւ նման բաներ անել": Յայնժամ Տէրն ասում է. "Պատճառն այն է՝ որ ծուլացար: Տե՛ս, հազիւ կանչեցիր ինձ՝ օգնութեան հասայ": Ուրեմն, ասում եմ քեզ՝ թէ շատ ջանք է հարկաւոր. եթէ մէկը ջանք չի գործադրում՝ չի կարող Աստծուն ունենալ իր հետ. նա մեզ համար խաչուեց»³:

Բացատրութեան միայն մի քանի խօսք: Աստծուն իսկապէս փնտռել՝ նշանակում է փնտռել Երիքովի կոյրերի, քանանացի կնոջ նման: Աստծուն փնտռել՝ նշանակում է աղակել սեփական սրտի աղօթքը. մեր ամբողջ էութիւնը պէտք է աղաղակ դառնայ: Այսպիսով Նա՛ որ մեզ սիրեց խաչի վրայ մահանալու աստիճան, Նա՛ որ երբեք բացակայ չէ, մօտենում է՝ մեզ փրկելու համար:

¹ Lettera 130, 19-20 (PL 33, 501-502); *La prière brève et pure selon saint Benoît*, Irénikon 52 (1979), pp. 507-512.

² L. Regnault, *La prière continuelle 'monologhistos' dans la littérature apophtegmatique*, Irénikon 47 (1974), pp. 467-493.

³ Եղիա 7.

Ողորմությունը

Միածին Որդու միջոցով Աստծոյ որդի դառնալ՝ նշանակում է նմանուէլ Հօրը, ողորմութեան ու գորովի Աստուծոն: Անապատի Հայրերի գոյութեանական մեծ յայտնաբերումը եղաւ սա. քրիստոնէական օրէնքը սէրն է:

«Հայր Մակար Մեծի մասին ասում էին, որ ինչպէս գրուած է՝ երկրի վրայ աստուած դարձաւ: Իսկապէս, ինչպէս Աստուած ծածկում է աշխարհն իր պաշտպանութեամբ, այնպէս Հայր Մակարը ծածկում էր տկարութիւնները՝ որ տեսնում էր, կարծես թէ չէր տեսնում»¹:

Աբբա Ամոնը այս ողորմած բարութեան մի հիանալի օրինակ է թողել, բարութեան՝ որը դիմացինին մղում է դարձի ու փրկութեան:

«Հայր Ամոնը մի օր ճաշի էր հրաւիրուել մի տեղ՝ ուր ապրում էր վատ համբաւ վայելող մի եղբայր: Եւ այնպէս եղաւ՝ որ կինը (որի հետ այդ եղբայրը յարաբերութեան մէջ էր) եկաւ եւ մտաւ վատ համբաւ ունեցող եղբօր խոցը: Այդ վայրի բնակիչները, երբ տեղեկացան, խռովուեցին եւ ի մի հաւաքուեցին, որպէսզի այդ եղբօրը վռնդեն իրենց մօտից: Իմանալով՝ թէ արբա Ամոնը այդտեղ էր, ոմանց ուղարկեցին նրան կանչելու, որպէսզի իրենց հետ լինէր: Եղբայրը անդրադարձաւ, որ բազմութիւնը գալիս էր դէպի իր խոցը եւ կնոջը թաքցրեց մի մեծ տակառի մէջ: Երբ տեղ հասան, Հայր Ամոնը գիտէր՝ թէ ինչ էր տեղի ունեցել, բայց Աստծոյ սիրոյ համար՝ կամեցաւ ծածկել իրականութիւնը: Ներս մտնելով, նստեց տակառի վրայ եւ հրամայեց փնտռել ամբողջ խոցով մէկ: Երբ ամէն կողմ փնտռելուց յետոյ կնոջը չգտան, Հայր Ամոնը ասաց. ”Ի՞նչ է նշանակում սա: Աստուած թող ների ձեզ այս գրպարտութեան համար”: Եւ նրանց համար աղօթելուց յետոյ՝ բոլորին դուրս հանեց: Ապա բռնեց եղբօր ձեռքից ու ասաց. ”Եղբայրս, զգոյշ եղիր հոգուդ փրկութեանը”: Այս խօսքերն ասելուց յետոյ՝ հեռացաւ այդտեղից»²:

Խաչը եւ Յարութիւնը

Անապատը կա՛մ զատկական է, կա՛մ էլ դառնում է դժոխք: Յարութեան պտուղը հասունանում է կեանքի ծառի վրայ. Խաչը: Վերջերս, Եգիպտոսի վանական կենտրոններում (Նիտրիա, Քէլլիա, Սաքքարա) կատարուած պեղումների ժամանակ, հնէաբանները յայտնաբերեցին խոցերի մեծամասնութեան արեւելեան պատին գծագրուած խաչեր. կեանքի ծառը: Ամմա Սինքլէտիկան ուսուցանում է. «Որպէս չքմեղանք մի՛ ներկայացրու փաստը՝ թէ չափազանց ծոմապահութիւնների պատճառով հիւանդացել ես, որովհետեւ նաեւ նրանք՝ ովքեր չեն ծոմապահում, ընկնում են միեւնոյն հիւանդութիւնների գիրկը: Ինչ որ մի բարի գործ սկսեցի՞ր: Մի՛ ընդհատիր, եթէ թշնամին ցանկանում է մոլորեցնել քեզ, որովհետեւ նա յաղթում է համբերութեանդ շնորհիւ: Նրանք՝ ովքեր սկսում են նաւարկել, նախ հանդիպում են նպաստաւոր քամիների, բայց առագաստները պարզելուց յետոյ՝ ենթարկւում են նաեւ ընդդիմադիր հողմերի: Երբ վերջիններս վրայ են հասնում, նաւավարները իսկոյն չեն դատարկում նաւը, այլ կա՛մ որոշ ժամանակով կանգ են առնում, կա՛մ էլ պայքարում են ալիքների դէմ, որից յետոյ շարունակում են նաւարկութիւնը: Այսպիսին է նաեւ մեր պարագան. եթէ հակառակ հողմերը հասնելիս պարզում ենք խաչի առագաստը, անվախ կարող ենք աւարտին հասցնել նաւարկութիւնը»³:

¹ Մակար 32.

² Ամոն 10.

³ Սինքլէտիկա 9.

Այս նիւթի վերաբերեալ ամենահամոզիչ վկայութիւններէց մէկը գտնուում է Մակար Մեծին նուիրուած զպտի մի ժողովածոյում, որ կոչուում է Սուրբ Մակարի Առաքինութիւնները: Հոգեւոր հայրութեան պարգեւաշնորհը ստանալու պատմութիւնը ներկայացնում է՝ թէ ինչպէս է Մակարը խորհրդաւոր կերպով խաչուում մի քերովբէի ձեռքով, դառնալով Քրիստոսի պատկերը, որպէսզի Սկիտէի չոր ու ամալի երկրի անէծքը վերածուէր դրախտի եւ երկնային Երուսաղէմի: «Աբբա Մակարի մասին պատմուում է հետեւեալը: Երբ նա մեծ յառաջադիմութիւններ ունեցաւ առաքինութեան գործում եւ մեծ համբերութեամբ ապրում էր Աստուծոյ շարունակական փառաբանութեան մէջ, փառքի Տէրը (1Կր 2, 8) նրա մօտ առաքեց մի քերովբէ: Հրեշտակը առաջնորդեց նրան դէպի այս լեռը¹: Ձեռքը դրեց նրա կրծքին (Հմմտ. Եզկ 1, 8), կարծես ուզում էր չափել այն: Աբբա Մակարը հարցրեց. "Ի՞նչ է նշանակում սա": Քերովբէն պատասխանեց. "Կշռում եմ սիրտդ": Աբբա Մակարը հարցրեց. "Ո՞րն է այս խօսքի իմաստը": Քերովբէն նրան պատասխանեց. "Քրիստոսի կողմից քեզ որպէս ժառանգութիւն պարգեւուած այս լեռը կրելու է սրտիդ անունը: Բայց նա սրա փոխարէն քեզնից պահանջելու է պտուղները": Աբբա Մակարը հարցրեց. "Որո՞նք են այդ պտուղները": Քերովբէն պատասխանեց. "Հոգու պտուղները, այսինքն՝ պատուիրաններն ու առաքինութիւնները (Հմմտ. Գղտ 5, 22): Քրիստոս, մեր Աստուածը, քեզ աստուած է դարձնելու երկրի վրայ (Հմմտ. Ել 4, 16) մի բազմանդամ ժողովրդի համար: Ովքեր կը լսեն, կը պահպանեն ու կը գործադրեն պատուիրաններդ, Քրիստոս Թագաւորի գալստեան օրը դափնեպսակ ու արքայական թագ կը լինեն գլխիդ վրայ": Այս խօսքերն ասելուց յետոյ, քերովբէն նրան գետնին խաչեց, ասելով. "Գու կը խաչես քեզ Քրիստոսի հետ եւ նրա հետ միասին՝ խաչի վրայ կը ճոխանաս առաքինութիւններով եւ նրանց բուրմունքով: Գործերդ կը տարածուեն երկրի չորս ծագերով մէկ եւ մեղքի ցեխի մէջ թաղուած մի մեծ բազմութիւն ոտքի կը կանգնեցնեն: Եւ ոտքի կանգնածները մարտիկներ ու զինուորներ կը դառնան Քրիստոսի զօրքի շարքերում": Աբբա Մակարը խստութեամբ էր վարուում իր մարմնի նկատմամբ (Հմմտ. 1Կր 9, 27) եւ եռանդով կատարում էր այն ամէնը՝ ինչ պատուիրել էր իրեն քերովբէն»²:

Այս պատմութիւնը կարիքն ունի երկար բացատրութիւնների: Բաւարարուենք միայն յիշելով՝ որ վանականի գատիկը հասցնում է Հոգու պտուղներին (Հմմտ. Գղտ 5, 22): Համբերութեան առաքինութեամբ, վանականը մասնակցում է Քրիստոսի չարչարանքներին եւ նմանուում է մարտիրոսներին: Իսկապէս, սեփական կեանքը յանուն սիրոյ պարգեւելը հաւասար է Հօր կատարեալ փառաւորմանը, Յիսուսի նմանութեամբ, որպէսզի բոլորը ի մի հաւաքուեն այս սիրոյ գրկում: Այսպիսով, մեր ամենամեծ Հայրերը միշտ ճանաչել են այն անհրաժեշտ կապը, որ գոյութիւն ունի միակ Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսի Հօր եւ Եկեղեցու միջեւ: «Ովքեր բաժանում են Քրիստոսի Եկեղեցին, հեռու են մաքուր աղօթքից»³:

Փառաւորումը

Անապատի Հայրերի այժմէականութիւնը կայանում է նրանց կողմից Աւետարանին ի նպաստ տրուած վկայութեան մէջ: Աստուծոյ բոլոր խօսքերը ճշմարիտ են եւ նրանց մէջ չկայ մէկը՝ որ արդիւնք չունենայ: Հայրերը հոգեւոր

¹ «Լեռ»ը զպտերէնում հոմանիչ է «անապատ»ի հետ: Այստեղ խօսուում է այն վայրի մասին, ուր ներկայիս գտնուում է «Սբ. Մակար» վանքը, Սկիտէի անապատում:

² A. Amélineau, *Virtù di S. Macario*, Annales du Musée Guimet 25 (1894), pp. 118-119.

³ Եւագրիոս, *Epistola* 52.

առաջնորդներ են, ո՛չ թէ հոգեկանութեան դասախօսներ (պրոֆեսոր): Յոյց են տալիս Աստծոյ կողմից իւրաքանչիւր մարդկային էակի ուղղուած կոչման միակութիւնը: Ճանապարհը ~ Քրիստոս ~ միակ է. բայց բազում են օթեւանները: Իւրաքանչիւր ոք Աստծոյ կողմից կանչուած է անունով, եւ այս անունը միակ է: Անապատի Հայրերի կշռադատութիւնը կարողացաւ բացայայտել քրիստոնէական դարձի մեծագոյն օրէնքները, որպէսզի որդիները ազատուել կարողանան հին մարդուց, յարութեան եւ փառաւորման նորութեան հեռանկարով: Որպէս եզրակացութիւն, միասին լսենք մի պատմութիւն՝ որ յիշեցնում է քրիստոնէական փափաքի վերջին կանչը. «Ե՛կ, Տէ՛ր Յիսուս» (Յյտ 22, 20):

«Հայր Սիզոնի մասին պատմում էին, որ մինչ պառկած էր մահուան անկողնում եւ հայրերը նստած էին իր կողքին, դէմքը սկսեց փայլել արեւի նման: Եւ ասաց նրանց. "Ահա, եկաւ հայր Անտոնը": Եւ քիչ անց ասաց. "Ահա, եկաւ մարգարէների դասը": Նրա դէմքը է՛լ աւելի փայլեց եւ ասաց. "Ահա, հասաւ առաքեալների դասը": Ապա նրա դէմքի փայլը կրկնապատկուեց եւ թւում էր՝ թէ խօսում էր ինչ որ մէկի հետ: Ծերերը աղաչեցին նրան, ասելով. "Ո՞ւմ հետ ես խօսում, հայր": Պատասխանեց. "Ահա, հրեշտակները եկել են ինձ տանելու, բայց խնդրում եմ տակաւին որոշ ժամանակ տան ինձ, որպէսզի կարողանամ մի քիչ ապաշխարել": Ծերերը նրան ասացին. "Ապաշխարելու կարիք չունես, հայր": Իսկ նա. "Իրականում, չգիտէի՝ թէ երբեւէ սկսել էի": Եւ ամէնքը հասկացան՝ որ կատարեալ էր: Նրա դէմքը յանկարծակի կրկին փայլեց արեւի նման. ամէն ոք երկիւղով բռնուեց: Եւ ասաց նրանց. "Տեսնո՞ւմ էք, Տէրը եկել է եւ ասում է. Իմ մօտ բերէք անապատի [ընտրեալ] անօթը": Եւ իսկոյն հոգին աւանդեց: Կայծակի նման եղաւ: Եւ ամբողջ տունը անուշահոտ բուրմունքով լցուեց»¹:

Մահը գրեթէ միշտ բացայայտում է կեանքի վերջին, գաղտնի իմաստը: Սիզոնի երկրային պանդխտութիւնը եղաւ մի անդադար փափաք: Քրիստոս այժմ ընդառաջ է գալիս նրան, սուրբ վանականների, մարգարէների ու առաքեալների ընկերակցութեամբ: Բայց ճիշտ այդ պահին, երբ Յարուցեալի փառքը մօտենում է, Սիզոնը զգում է իրեն մեղաւոր, սկսնակ, բարի գործերի համար անպէտք մի մարդ: Սէրը վերարթնացնում է դարձի գալու այս կենսական պահանջը. սա՛ է կատարելութիւնը: Յունական իմաստասիրական երազանքներին արմատապէս հակառակ մի համոզում, որը Գրիգոր Նիւսացու կողմից արտայայտուած է «անփոփոխ շարժում» առեղծուածային բանաձեւով: Ուշադիր լինենք նաեւ Եկեղեցու խորհրդի ծածուկ ներկայութեանը: Եկեղեցին Աստծոյ տունն է: Վանականի մահը այն լցնում է Քրիստոսի բուրմունքով: Անօթը բեկուած է եւ անուշահոտ բուրմունքը տարածուած է ամբողջ աշխարհով մէկ: Աւետարանում յիշուող կնոջ նման, յիրաւի, նա շատ էր սիրել:



¹ Սիզոն է 14.